ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ՀԱՎԱՏՔ ԵՎ ԿԱՐԳ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԸ ՄԱԼԱՅԶԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿՈՒԱԼԱ ԼՈՒՄՊՈՒՐՈՒՄ

(28 հուլիս - 6 օգոստոս 2004 թ.)

Հուլիսի 28-ից օգոստոսի 6-ը տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի լիագումար նիստը Մալայզիայի մայրաքաղաք Կուալա Լումպուրում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, նիստին մասնակցեց Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը (1999 թ. «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի անդամ):

Այդ նիստը «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի միակ լիագումար նիստն էր ԵՀԽ 8-րդ (տեղի ունեցած Ջիմբաբվեի մայրաքաղաք Հարարեում 1998 թ.) և 9-րդ (տեղի ունենալիք Պորտո-Ալեգրեում 2006 թ.) համաժողովների միջև: Լիագումար նիստի օրակարգը հաստատված էր ԵՀԽ 8-րդ համաժողովի կողմից, իսկ ընդունված փաստաթղթերը ներկայացվելու են ԵՀԽ 9-րդ համաժողովին: Նիստի նշանաբանն էր՝ «Ընկալարուք զմիմեանս» (Հռոմ. ԺԵ 7), և պատահականորեն չէր ընտրված նիստի վայրը, քանի որ Մալայզիան իր բնակչության ճնշող մեծամասնությամբ մահմեդական երկիր է, իսկ ներկայիս ահագնացող ահաբեկչության պայմաններում առաջնահերթ անհրաժեշտություն է դարձել քրիստոնեության և մահմեդականության երկխոսությունը:

Նիստը սկսվեց հուլիսի 28-ի առավոտյան՝ ԵՀԽ նորընտիր գլխավոր քարտուղար Սամուել Կոբիայի ողջույնի խոսքով: Ապա նիստը ողջունեցին Ասիայի Եկեղեցիների Խորհրդի գլխավոր քարտուղար Ան Ցե Վունը և Մալայզիայի Եկեղեցիների Խորհրդի գլխավոր քարտուղար Հերմեն Շաստրին: Այնուհետև լսվեցին «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի ատենապետ Դավիդ Եմբայի և գործադիր տնօրեն Ալան Ֆալկոների զեկույցները: Վերջինիս զեկույցն ընթերցեց առժամյա տնօրեն Թոմ Բեսթը, քանի որ նիստից ընդամենը մեկ ամիս առաջ Ալան Ֆալկոներն անցել էր հովվական ծառայության: Երեկոյան Կուալա Լումպուրի

Անգլիկան Մայր Տաճարում տեղի ունեցավ բացման պաշտամունք՝ քաղաքի անգլիկան եպիսկոպոսի նախագահությամբ:

Հուլիսի 29-ին լսվեցին հիմնական զեկույցներ նիստի բնաբանի շուրջ: Հաջորդ օրերին զեկույցներ լսվեցին և քննարկումներ եղան Մկրտության (հուլիս 30), Եկեղեցաբանության (հուլիս 31), Ազգային ինքնության և եկեղեցական միության (օգոստոս 2), Մարդաբանության (օգոստոս 3), ինչպես նաև Միջկրոնական երկխոսության (օգոստոս 5) շուրջ: Այս բոլոր զեկույցների և քննարկումների արդյունքում ընդունվեցին ուղենշային փաստաթղթեր, որոնք ներկայացվելու են 2006 թ. Պորտո-Ալեգրեում գումարվելիք ԵՀԽ 9-րդ համաժողովին:

Օգոստոսի 1-ին, կիրակի օրը, նիստի ուղղափառ անդամները ներկա եղան Կուալա Լումպուրի միակ ուղղափառ՝ Հնդիկ Մալանկարա Ս. Աստվածածին եկեղեցում մատուցված Ս. Պատարագին: Քարոզը խոսեց Ղպտի Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Ամբա Բիշոն:

Օգոստոսի 3-ին նիստի մասնակիցներին այցելեց և իր բովանդակալից խոսքով ողջունեց երկրի վարչապետ Աբդուլլահ Բադաուին: Իր խոսքում նա ընդգծեց քրիստոնեության և մահմեդականության խաղաղ գոյակցության անհրաժեշտությունը՝ խոստանալով ամեն ինչ անել դրա համար: Վարչապետի խոսքն անկեղծ էր ու հուզիչ:

Օգոստոսի 6-ին ընդունվեցին բոլոր ուղենշային փաստաթղթերը և նիստի պատգամը՝ ուղղված անդամ Եկեղեցիներին:

Օգոստոսի 7-ին «Հավատք և Կարգ» Հանձնաժողովի անդամ և լիազումար նիստում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը Մալայզիայում բնակվող միակ հայ Արմեն Բաբայանի հետ մեկնեց Մալակկա քաղաք՝ այցելելու տեղի բողոքական եկեղեցու բակում հանգչող Հակոբ Շահամիրյանի շիրիմին՝ փոխանցելու Հայաստանի ազատության ավետիսը: Սրբազան Հայրը՝ 230 տարի առաջ Հայաստանի ազատության երազով ննջած 29-ամյա հայ երիտասարդին այցելու առաջին հայաստանցի հոգևորականը եղավ: Սրբազան Հոր վկայությամբ՝ շիրիմն անխաթար է պահվում եկեղեցու հովիվների կողմից և համարվում է տաճարի նշանակալից հիշատակներից մեկը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ